

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՏԵՆ

ԳՐԱՏՈՒՆԵՐՈՒ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Հին Ազգերու պատմութենէն զիտենք թէ նշանաւոր գրատունները, ինչպէս Ադեքսանդրիոյ և Պերկամոյի, հրոյ ճարակ ըլլալով՝ համաշխարհային գրական կեանքին և մշակոյթին անդարմանելի փաստներ տուած են: Առաջինին⁽¹⁾ հրկիզուած, ըստ հին աւանդութեան մը, կը վերագրուի Յուլիոս Կեսարի անխոհեմութեան, երբ ան իր նաւատորմին կրակ տալով պատճառ կ'ըլլար որ հրդեհը հասնելով նաեւ Սերապիսի գրատան՝ զայն եւս աւերէր: Անտոնինոս Պերկամոյի գրատունը Եգիպտոս փոխադրելով կղէպատրայի նուէր կ'ընէ, ու կը դարձանէ Սերապիսի գրատան փաստը: Սակայն դարեր ետք՝ 641-ին, ըստ Ապուլ Փարաճի, Էօմէր խալիֆան Եգիպտոսը գրաւելով՝ կը հրամայէ Ադեքսանդրիոյ մեծահամբաւ այդ գրատունն այրել ու ջնջել: Քրիստոնէութիւնը, քաղաքակրթութիւնը դարերէ ի վեր կ'ափսոսայ այս անդարմանելի կորուստը ու մեղադրանքով կ'արտայայտուի միշտ եղած աններելի բարբարոսութեան դէմ: Միջին դարու մէջ ալ բազմաթիւ մատենադարաններ, բարբարոսներու արշաւանքներու շրջանին հրոյ ճարակ եղած փճացած են: Այսուհանդերձ, մարդկութիւնը՝ զրեթէ բոլոր քաղաքակիրթ ու զարգացած երկիրներու մէջ, դարերէ ի վեր ջանացած

է իր մշակոյթի ու մտքի գանձերը գուրգուրանքով պահել ու պահպանել, և յօգուտ սերունդներու քաղաքակրթութեան՝ հնարամիտ միջոցներով զիւրամատչելի դարձնել: Հնամեայ զինամուրութիւնը և օտարամերժ բռնակալութիւնը, քսաներորդ դարու Աղէտը, քաղաքակրթութեան, մշակոյթի այդ փեթակները բնաջնջելու աններելի յանդգնութիւնը կ'ունենայ զժրախտաբար քաղաքակրթութեան ռազմիրաններ յորջորջուելու յաւակնութեամբ:

Մարդկային պատմութիւնը ասկէ առաջ երբեք տեսած չէ այսքան մեծղի ու ցաւալի աւերում նշանաւոր մատենադարաններու և այլ գրական հաւաքածոներու՝ ինչպէս այս վերջին համաշխարհային պատերազմի շրջանին: Նախորդ մեծ պատերազմին՝ մէկ հատ միայն համալսարանական գրատուն ամբողջովին փճացաւ, Լուվէի գրատունը՝ որ կամաւորապէս հրկիզուեցաւ գերմանացիներէն: Մինչդեռ այս երկրորդին հարիւրաւոր գրատուններ կործանած կամ մասամբ փճացած են: Անգլիոյ մէջ՝ ամէնէն կարեւորներէն յիշատակութեան արժանի են՝ Քենթրիքի, Լոնտոնի քաղաքապետական գրատունները և անգլիական թանգարանի մատենադարանին քանի մը բաժինները:

Քնական է որ զրաւուած երկիրներու գրատունները շատ աւելի փաստեցան: Լուվէի համալսարանը՝ որ նախորդ պատերազմէն անմիջապէս ետք վերաշինուած էր, կրկին հրկիզուեցաւ 1940-ին՝ առանց պատերազմական պատճառի. կը թուի թէ՝

Գերմանացիներ ուզած են զայն փճացնել, վասն զի 900,000 հատորները՝ վրանին կը կրէին պիտակ մը (ex libris) ներկայացնելով գերման զինուոր մը՝ որ ձեռքը ջահ մը համալսարանին կրակ կու տայ: Ներկայիս Պելճիքացիներ անմիջապէս հանգանակութեան ձեռնարկեցին վերաշինելու իրենց գրեհական գանձը, և աշխարհիս ամէն կողմէն արդէն ստացած են 350,000-ի մօտ գիրքեր: Ամերիկացիք մասնաւոր հիմնադրամ հաստատած են Լուվէի համար: Գրաւուած զրեթէ բոլոր երկիրներու մէջ՝ Գերմանացիները կամ կողոպտեցին և կամ այրեցին գիրքերու հաւաքածոներ. կարելի է ըսել որ ասիկա իմացական ստրկացումի պատրաստուած ծրագրի մը մաս կը կազմէր: Լեհաստան ահռելի կորուստներ կրեց: Գերմանացիներ նախ սկսան հասարակաց գրադարաններու «վնասակար, ոչ հաճելի» գիրքերն այրել, սակայն շուտով արմատական միջոցներու ձեռք զարկին, և կարելի է թուել՝ որ 60-70 առ հարիւր լեհական գրատունները — ամբողջապէս կամ մասամբ — կողոպտուեցան կամ հրկիզուեցան: Վարշաւոյ մէջ միայն տասներկու գրատուն կը համրուի. հրէական գրատունը՝ Վիեննա, իսկ Արտաքին գործոց նախարարութեանը՝ Պերլին փոխադրուեցան: Լուվիւնի Հրէից աստուածաբանական վարժարանը ամբողջովին հրդեհուեցաւ՝ Հրեաներու սուգ ու ցաւին և նացիականներու ցնծութեան մէջ: Փարիզի մէջ ալ ուզուեցաւ լեհական մշակոյթի ու և է հետք աներեւու թացնել. Լեհաստանի մասին մասնագիտական շքեղ գրատուն մը, որ կը գտնուէր Քէ տ'Օուլէանի վրայ, Գերմանիա տաւրուելով՝ Հիթլէր զայն Ռոզենպերկի նուէր ըրաւ: Միեւնոյն վիճակի են թարգմանական ուրիշ գանազան առանձնական գրադարաններ. շատ մը արժէքաւոր հաւաքածոներ գերման պետական գրադարաններու խառնուեցան, որպէս զի հետքերնին կորուսուի:

Նոյն բախտին վիճակուեցան գրաւման տակ գտնուող ուրիշ երկիրներ ալ. Չեխոսլովաքիոյ մէջ՝ 1938-էն սկսեալ 411 գրատուններ փճացան, և ուրիշ հարիւրաւոր հաւաքածոներ կողոպտուեցան կամ գրաւուեցան: Գերմանացիներ իրենց վերջին մուտքին Փրակա՝ համալսարանը փակեցին և բոլոր գիրքերը առին տարին՝ ըսելով թէ՝ «Չեխեր այլեւս անոնց պէտք չունենէին»: Դպրոցական բոլոր գիրքերը փճացան:

Լիւքսեմպուրկի դքսական պալատի հրաշալի գրադարանները կողոպտուեցան, և առանձնական հաւաքածոները չորս հովին ցրուեցան: Հագուագիւտ և կարեւոր բոլոր գիրքերը զոյգուեցան ու մնացածը Գերմանիա տարուեցաւ իբր հասարակ թուղթ գործածուելու համար:

Հոլանտա և Նորուեկիա համեմատաբար քիչ տուեցին, բայց ամենախիստ հրամաններ տրուեցան՝ հասարակաց շատ մը գրատունները փակելու «թոյնիւրու մթերանոցին» մէջ, այսինքն շրջաբերութենէ դուրս հանելու բոլոր այն գիրքերը՝ որոնք Գերմանիոյ դէմ կը խօսէին, կամ ո՛ր և է ձեռով քաղաքականապէս անփափաքելի էին: Այսուհանդերձ Հոլանտացիներ գիտցան վարպետութեամբ պահել իրենց գիրքերը բոլոր գրաւման շրջանին, ու ներկայիս վերստին իրենց գրադարաններուն մէջ տեղաւորեցին:

Եւրոպայի մէջ, Պելկրատի համալսարանին կաճառական մարմինը զարմանալի արթնամտութիւն ունեցաւ՝ անմիջապէս գրադարաններէն հեռացնելու կասկածելի գիրքերը ու գրացուցակներէն անյայտացնելու պիտակները. շնորհիւ այս ճարպիկութեան համալսարանական մատենադարանը, որ շուրջ կէս միլիոն հատորներու հարստութիւն ունի, զրեթէ առնադարտ մնաց: Մինչդեռ Պելկրատի ուրիշ գրատունները փաստեցան և կամ բոլորովին այրեցան:

1. Ադեքսանդրիոյ Պտղոմեանց Գրատունը՝ կալիփաքոսի ատեն երկու մասի բաժնուած էր: Պտղոմեոս Բ. Եղբայրասէրի ատեն՝ մեծ գրատունը որ թագաւորական պալատին կից էր Պրուքիոնի մէջ, ունէր 49,000 գիրք, իսկ փոքրը՝ Սերապիսի գրատունը՝ ունէր 42,800. Սերապիսի տաճարին մօտ. Կեսարու ատեն՝ կը կարծուի որ եղած ըլլայ մինչեւ 700,000 գիրք. (միայն թէ զիրք ըսելով չհասկնանք հատորներ ներկայ իմաստով, այլ

նաեւ զլանաձեւ փաթաթուած գրութիւններ): Արեգիկաշու կայսրը, 270-ին կործանել կու տայ, ապստամբութեան մը պատճառաւ Պրուքիոնի պալատը, և անկէ ետք մեծ գրատան վրայ չի խօսուիր: Իսկ՝ 391-ին Թէոփիլոս եպիսկոպոսը երբ Սերապիսի տաճարը այրել կու տայ, հաւանական է որ Սերապիսի գրատունն ալ միասին հրոյ ճարակ եղած ըլլայ:

Գիրքերէ ստրայտակ մը. — Ռուսիոյ մէջ Նացիականները մասնաշատուկ խումբեր կազմեցին կանոնաւոր կերպով գրատուններ կողոպտելու համար. արժէքաւոր երկերը Գերմանիա ճամբեցին ու մնացորդները փճացուցին: Քիչիւր մէջ հրապարակաւ այրեցին միլիոնաւոր գիրքեր. խարքով մէջ՝ Քարտէկեքոյի գրատան գիրքերը՝ քարէ զանգուածներու պէս, ճամբաները սալաշատակելու գործածեցին երբ ինքնաշարժեր ցիխերու մէջէն չէին կրնար ազատորէն ընթանալ: Եւ ամէնէն աւելի ծանր նախատինքն եղաւ Թուրքոյական թանգարանին կողոպուտը, ուսկից տարուեցան բոլոր գիրքերն ու ձեռագրերը և կամ զինուորներէն գողցուեցան՝ ցրտասառոյց զիշերները իբր վառելիք գործածուելու:

Վիլնայի մէջ՝ քառասուն տարի աշխատութեամբ հաւաքուած ձեռագիրներու հազին ամբողջութիւն մը՝ որ լիթուանական բառգիրքի մը կազմութեան պիտի ծառայէր, հրկիզուեցաւ առանց պատճառի: Խառնիւր մէջ ալ բաւական գրադարաններ փնտրուած կամ մասամբ փճացած են, մասնաւորապէս ռմբակոծման ենթարկուած քաղաքներուն մէջ: Մոնթէքապինոյի հռչակաւոր վանքին դարաւոր հսկայ մատենադարանը և դիւանը բարեբախտաբար շէնքին ռմբակոծումէն առաջ մեծ մասամբ փրկուած էր, գերման ճիրաններէն ազատելով և փոխադրելով Վատիկան, թէպէտեւ մէկ երկու սնտուկներ իրենց արժէքաւոր բեռով ճամբանին շարունակած են զէպի հիւսիս, որոնք սակայն վերջերս Պաւլիերայի մէջ գտնուեցան:

Ծայրագոյն Արեւելքի մէջ. — Ճափոնը միեւնոյն քաղաքականութեան հետեւեցաւ, այնպէս որ՝ Չինաստանի մշակութային հաստատութիւնները անդարմանելի փնտսներու ենթարկուեցան: Չինաստանի համալսարանական գրատուններուն 70 առ հարիւրը կը գտնուէր ծովեզերեայ քա-

ղաքներուն մէջ, որոնք Ճափոններէն գրատուած էին: Չին-Նոսայի համալսարանը ամէնէն հարուստը և լաւագոյն կազմակերպուածն էր. Ճափոնները հոն զօրանոց շինեցին. Ճոն Հէյի գրատունը զինուորական հիւանդանոցի վերածուեցաւ: Թշնամին երբ սկսաւ յառաջանալ Չին-Նոսայի ուսանողները և բարձրագոյն վարժարաններու աշակերտներ Ազատ Չինաստան փախան բեռնաւորուած թանկագին գիրքերով. հազար մղոնէն աւելի երկար ճամբայ մը կտրելով լեռներու վրայէն, անձայրածիր անապատներէն ռմբակոծումներու սպառնալիքին տակ, որով գիրքերէն շատերը թէեւ փճացան, բայց հազարաւոր երկեր ալ ազատեցան:

Ասոնք կամովին փճացուած, կամ ուղղակի պատերազմին պատճառաւ կորսուած գիրքեր էին. իսկ անդին դեռ ամբաւքանակութեամբ փճացան կամ ջնջուեցան անուղղակի հետեւանքով՝ անհոգութեամբ, անփորձութեամբ և կամ զէշ կերպով շտեմարանուելով: Խառնիւր մէջ՝ Նացիականները Չեքանոյէն քաշուած տտենին հինգ վեց հազար հատորներ լքեցին ու գացին: Այս թանկագին բեռը յետոյ գտնուեցաւ՝ անձրեւէ, որդերէ, մզլոտութենէ և առանհերք փճացած վիճակի մէջ. նոյնպէս Անգլիոյ մէջ այս կերպով հազարաւոր հատորներ կորսուած են:

Իսկ Գերմանիոյ մէջ ռմբակոծումներէն քարուքանդ եղած քաղաքներուն գրատունները և գրենական հարստութիւնը: Անոնց մասին անշուշտ Գերմանացիներ իրենք պիտի կարենան որոշ գաղափար մը տալ, երբ պարտութեան հետեւանքով իրենց վրայ ճնշող սեղմումներէն ազատած, բոլոր հարեւան ժողովուրդներու հետ՝ լծուին վերաշինութեան աշխատութեան և քաղաքակրթութեան բարենորոգումին:

Վերաշինութիւն. — Արդ, քաղաքակիրթ աշխարհը եղբրական աշխատութեան մ'առջեւ կը գտնուի վերաշինելու այս

ՀԵՆՐԻ ՄՈՐԿԸՆԹԱՈՒ

մատենադարանները. պէտք է վերականգնել կործանուած գրատունները ու վերակազմել մատենական հարստութիւնը: Տեղափոխուած բոլոր գիրքերը պէտք են ճշգրիտ և իրենց օրինաւոր տէրերուն ու տեղերուն դարձուիլ: Դժբախտաբար՝ միակ օրինակ թանկագին կտորները անդարմանելիօրէն կորսուած են՝ միւսներ ըկարելի է կրկին տպագրել՝ թէեւ տարիներու պէտք կայ միլիոնաւոր գիրքեր հաւաքելու ու կրկին տպագրելու համար:

Այս հսկայական հարցը լուծելու համար յատուկ միութիւններ, ընկերութիւններ կազմուած են՝ որոնք արդէն Հոլանտադրկաւ են երկու հազար հատորներ. որոնց անհրաժեշտ պէտք կար: Անգլիացի և Ամերիկացի գիտնականներ բաւականաչափ գիրքեր կը նուիրեն Մոսկուայի մէջ բացուած Բժշկական Մատենադարանի կեդրոնին: Այս երկու կառավարութիւնները դարձեալ ամէն դիւրութիւն կ'ընծայեն գիրքերու առաքման: Բայց արմատական վախճանի մը հասնելու համար՝ համաձայնական նախարարներու Համաժողովը կը հաստատէ միջհամաձայնական կեդրոնական մատենադարանի յատուկ յանձնաժողով մը. ազգային և համալսարանական գրատուններուն գիրք հայթայթելու նպատակով: Տասնեակ հազարաւոր գիրքեր արդէն այսպէս հաւաքուած են և ուրիշներ հաւաքուելու վրայ են:

Համաժողովներ, համամիութիւններ երբ առանց ցեղի խտրութեան հոգեւին կը լծուին վերականգնելու քաղաքակրթութեան ու մշակոյթի այս աղետալի քանդումն և աւերումը, անշուշտ խորապէս կը մտահոգուին, կը դարձնուին գաղափարապէս նաեւ ապագայի համար, ցմիշտ խափանելու աղետալի պատերազմները: Մարդկութիւնը, և մարդկութեան հրաշակերտները փրկելու արմատական միակ միջոցը այս է:

Հ. Յ. Բ.

Մարդու մը հոգւոյ բարձրութիւնը, լայնախոհութիւնը շատ անգամ կ'արտացոլայ խօսքին ու գործին մէջ: Խօսքս դիւանագիտութեան կամ դիւանագէտի վրայ չէ, ուր յաճախ արտաքին պաշտօնական մարդը՝ հակապատկերն է ներքին իրական մարդուն: Անհատի մը, անիրաւուած, ընկճուած ժողովուրդի մը պաշտպանողական ընելու համար՝ ջատագովական հատորներ կազմելու անհրաժեշտ հարկ չկայ, երբ մանաւանդ պետական անձնաւորութեան մը կողմէն է այդ վեհանձն վճռականութիւնը: Կ'ըսեն. «խօսքը կը թռչի, գիրքը կը մնայ». բայց երբեմն կան նաեւ խօսքեր որոնք հոգիներու մէջ կը քանդակուին ու կ'ապրին սերունդէ սերունդ:

Հենրի Մորկընթաու եղաւ ան սակաւաթիւ լուսամիտ դէմքերէն մէկը՝ որ առանց երբեք նկատողութեան առնելու պետական մարդու փափուկ դիրքը, և առանց վրդովելու իբր դեսպան իր ներկայացուցած ժողովուրդին քաղաքականութիւնը, կրցաւ համարձակ և անվերապահ քաղաքակրթութեան երեսին պռաւ ու քսաներորդ դարու եղեռնական գործերը այսպանել բարձրագոյն: Ան դեսպան էր Պոլսոյ մէջ, 1913-1916 յունական և մանաւանդ հայկական աղէտին ամէնէն բուռն և ահաւոր շրջանին, երբ՝ Պոլսոյ մէջ երեսփոխան Զօհրապէն, Վարդգէսէն սկսեալ երեւելի շատ մը դէմքեր ու մտաւորականներ ձերբակալուելով խուճապ խուճապ կը զըրկուէին զէպի մահ, երբ գաւառներու հայ ժողովուրդը իր պապեանական դարաւոր բոյներէն բռնաբարձ կը տարուէր ոչխարներու հօտերուն պէս, թշուառ վիճակի մէջ, զէպի սպանդ: Երբ Վանիէն հայ մանիոյ ամենագոր դեսպանը շնական լուծեամբ կը հաստատէր թէ՛ Թուրքիոյ ներքին գործերուն... չէր կրնար խառնուել,